ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IED2-FC23-4700-975F հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/3356/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Շիլաջյանի

2025 թվականի նոյեմբերի 19-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/3356/02/24 քաղաքացիական գործը,

ՊԱՐԶԵՑ

Ագաստ ՍՊ ընկերության ներկայացուցիչը 30.04.2024 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Գորիսի բժշկական կենտրոն ՓԲ ընկերության՝ կողմերի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Թիվ ԵԴ2/3388/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է 02.05.2024 թվականին և նույն օրը մակագրվել է դատավոր Արտուշ Ավագյանին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) 27.05.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջվել է ՀՀ «ՍՄԳԲԿԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները իսկ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է սահմանվել՝ 17.06.2024 թվականին:

Նույն թվականի մեկ այլ որոշմամբ հայցի ապահովման միջոց կիրառելու մասին միջնորդությունը բավարարվել է՝ արգելվել է «Գորիս Բժշկական Կենտրոն» ՓԲ ընկերությանը կատարել որևէ գործողություն՝ ուղղված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում կողմերի միջև կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի ներկայացված տուժանքի մասին համաձայնագրերով (որակավորման և պայմանագրի ապահովում) առկա գումարների գանձմանը:

Թիվ ԵԴ2/3356/02/24 քաղաքացիական գործով հայցադիմումն էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է 30.04.2024 թվականին և նույն օրը մակագրվել է դատավոր Արտուշ Ավագյանին: Հայցադիմումը վերադարձվել է, որը թույլ տրված խախտումները վերացնելուց հետո՝ 22.05.2024 թվականին, էլեկտրոնային եղանակով կրկին ներկայացվել է դատարան և նույն օրը մակագրվել է դատավոր Արտուշ Ավագյանին:

Դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) 27.05.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը ընդունվել է վարույթ, «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ից պահանջվել է ՀՀ «ՍՄԳԲԿԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված վերջինիս տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները իսկ եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է սահմանվել՝ 17.06.2024 թվականին:

Նույն թվականի մեկ այլ որոշմամբ թիվ ԵԴ2/3356/02/24 և թիվ ԵԴ2/3388/02/24 քաղաքացիական գործերը միացվել են ստանալով թիվ ԵԴ2/3356/02/24 քաղաքացիական գործի համարը: Դատարանի 13.06.2024 թվականի որոշմամբ նշանակվել է դատական նիստ:

Դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) 09.08.2024թ. արձանագրային

որոշմամբ կողմերի միջև բաշխվել է ապացուցման պարտականությունը:

Դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) 17.09.2024թ. որոշմամբ նշանակվել է դատաքննություն:

Դատարանի (դատավոր՝ Ա. Ավագյան) 21.10.2024 թվականի վճռով հայցը բավարարվել է, վճռվել է. « 1. «Ագաստ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ կողմերի միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրենի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել: 2. Անվավեր ճանաչել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից վերջինիս և «Ագաստ» ՍՊ ընկերության միջև 30.01.2024 թվականին կնքված թիվ «ՍՄԳԲԿԳՀՍՊՁԲ-24/2/5» ծածկագրով պայմանագրի միակողմանի լուծումը: 3. Անվավեր ճանաչել «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրենի կողմից կայացված՝ «Ագաստ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված որոշումը (...) »:

Պատասխանողի ներկայացուցիչը 20.11.2025 թվականին ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 19.12.2024 թվականի որոշմամբ վերաքննիչ բողոքը ընդունվել է վարույթ:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը 30.05.2025 թվականի որոշմամբ որոշել է.

«1. «Գորիսի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցչի կողմից բերված վերաքննիչ բողոքը բավարարել: 2. Թիվ ԵԴ2/3356/02/24 էլեկտրոնային քաղաքացիական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 21.10.2024 թվականով թվագրված վճիռն ամբողջությամբ բեկանել և գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: 3. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք եզրափակիչ դատական ակտով»:

Թիվ ԵԴ2/3356/02/24 քաղաքացիական գործը 13.11.2024 թվականին ժամը 21:37-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին:

Հաշվի առնելով, որ այդ պահին աշխատանքային ժամն ավարտված է եղել, Համակարգում հասանելի դառնալու պահ է համարվում 14.11.2025 թվականը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ դատարանում գործի նոր քննությունն

իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:

Գործի նոր քննության ժամանակ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ, 414-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2025 թվականի դեկտեմբերի 30-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:
2. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:
3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Աննա Շիլաջյան

Digitally signed by SHILAJYAN ANNA

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am